ՀՏԴ 332(479.243)
Տնտեսագիտություն

Թալաթ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԱՐՑԱԽԻ ԳՅՈՒՂԵՐԻ և ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Արցախի տնտեսության զարգացումը որոշակիորեն պայմանավորված է հանքարդյունաբերության, գյուղատնտեսության և էներգետիկայի /մասնավորապես, հիդրոէներգետիկայի/ զարգացման ներուժից: Գյուղատնտեսության ոլորտի զարգացումը կարևորվում է միանգամից մի քանի առումներով՝ պարենային անվտանգության ապահովման, գյուղատնտեսական արտադրության արտադրողականության բարձրացման, գյուղմթերքների և նրանցից ստացված ապրանքների մրցունակության բարձրացման, ոլորտը արդյունաբերական հիմքերի և մեքենայացման ու ավտոմատացման ավելի բարձր աստիճանի բարձրացնելու, Արցախում գյուղմթերքների վերամշակումը խթանելու, դրանք արտաքին շուկաներում ներկայացնելու, ինչպես նաև հայկական գյուղերն ամրացնելու, ժողովրդագրական խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու ռազմավարական հրամայականներով:

Բանալի բառեր՝ *Արցախ, գյուղատնտեսություն, պարենային անվտանգություն, գյուղացիական տնտեսություններ, մշակաբույսեր, անասնապահություն*

T. Manaseryan

PROSPECTS FOR ARTSAKH'S AGRICULTURAL DEVELOPMENT AND STRENGTHENING VILLAGES

The development of Artsakh's economy is definitely conditioned by the potential of mining, agriculture and energy (in particular, hydropower). The development of the agricultural sector is important in several ways: food security, raising productivity of agricultural production, increasing the competitiveness of agricultural products and their products, raising the level of industrial base and mechanization and automation, promoting the processing of agricultural products in Artsakh, presenting them on the external markets. as well as strengthening the Armenian villages, contributing to the effective solution of demographic problems.

Key words. Artsakh, agriculture, food security, farming, crops, cattle breeding.

Т.Манасерян

ПЕРСПЕКТИВЫ УСИЛЕНИЯ АРЦАХСКИХ СЕЛ И РАЗВИТИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА

Развитие экономики Арцаха определенно обусловлено потенциалом добычи полезных ископаемых, сельского хозяйства и энергетики (в частности, гидроэнергетики). Развитие сельскохозяйственного сектора важно по нескольким направлениям: продовольственная безопасность, повышение производительности сельско-хозяйственного производства, повышение конкурентоспособности сельскохозяйственной продукции и их продукции, повышение уровня промышленной базы, механизации и автоматизации, содействие переработке сельскохозяйственной продукции в Арцахе, представление ее на внешних рынках. а также укрепление армянских сел, способствующих эффективному решению демографических проблем.

***Ключевые слова**: Арцах, сельское хозяйство, продовольственная безопасность, сельское хозяйство, посевы, скотоводство.*

Վերջին տարիներին գրանցված տնտեսական ցուցանիշների ուսումնասիրությունները վկայում են, որ Արցախի Հանրապետության տնտեսության զարգացումը որոշակիորեն պայմանավորված է հանքարդյունա-բերության, գյուղատնտեսության և էներգետիկայի /մասնավորապես, հիդրոէներգետիկայի/ զարգացման ներուժից: Ընդսմին, հաշվի առնելով ինչպես տնտեսության, այնպես էլ մարդկային՝ մասնագիտական ռեսուրսների ավելի լայն հնարավորությունները, չպետք է անտեսել գիտատար ճյուղերի և ծառայությունների առանձին ոլորտների նպատակային զարգացման և համախառն ներքին արդյունքի կառուցվածքի բազմազանեցման հեռանկարները:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ նշված երեք լոկոմոտիվային ճյուղերից առավելապես կարևորվում է գյուղատնտեսության ոլորտի զարգացումը միանգամից մի քանի առումներով՝ պարենային անվտանգության ապահովման, գյուղատնտեսական արտադրության արտադրողականության բարձրացման, գյուղմթերքների և նրանցից ստացված ապրանքների մրցունակության բարձրացման, ոլորտը արդյունաբերական հիմքերի և մեքենայացման ու ավտոմատացման ավելի բարձր աստիճանի բարձրացնելու, Արցախում գյուղմթերքների վերամշակումը խթանելու, դրանք արտաքին շուկաներում ներկայացնելու, ինչպես նաև հայկական գյուղերն ամրացնելու, ժողովրդագրական խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու ռազմավարական հրամայականներով:

Հանրապետության 372 համայնքներից 239-ը գյուղական են (գյուղում բնակվում են երկրի բնակչության շուրջ 43 տոկոսը), ուստի գյուղատնտեսությունը ռազմավարական կարևոր նշանակություն ունի նաև գյուղական տարածքների զարգացման առումով: Գյուղատնտեսությունում զբաղված են 5.4 հազ. մարդ, որը երկրի ընդհանուր զբաղվածության 9.7 տոկոսն է: Երկրի արտաքին ապրանքաշրջանառության կառուցվածքում բուսական և կենդանական ծագման արտադրատեսակների տեսակարար կշիռը 2018 թվականին կազմել է 7604.8 կամ 1.37% իսկ միայն արտահանված արտադրանքի կառուցվածքում՝ 7.8 %, իսկ 2017 թվականի համեմատ այս ցուցանիշները մի դեպքում որոշակիորեն բարելավվել են, իսկ մյուս դեպքում

որոշ անկում արձանագրել: Այն հանգամանքը, որ դեռևս ցածր է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և կենդանիների մթերատվությունը, արդեն իսկ խոսում է ինտենսիվացման ցածր մակարդակ ունեցող գյուղատնտեսության մասին: Արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքում 2018 թվականի տվյալներով գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների մեջ գինեգործական և այլ ալկոհոլային արտադրանքը կազմել է շուրջ 2 148.1 մլն դրամ, նախորդ տարվա համեմատ աճելով 3.2 տոկոսով[1], որն ինքնին արտահանման դիվերսիֆիկացման խնդիր է առաջադրում:

Գյուղական բնակավայրերի բնակչության եկամուտների գերակշռող մասը ստացվում է հանքարդյունաբերությունից և գյուղատնտեսական արտադրությունից և այդ ոլորտներում վարձու աշխատանքից: Հետևաբար, այդ բնակավայրերում աղքատության մակարդակը մեծապես պայմանավորված է հիշյալ ոլորտների զարգացման վիճակով:

Պարենային հաշվեկշռի տվյալների, ինչպես նաև Արցախի գյուղատնտեսության ներուժի վերլուծությունը վկայում է, որ, էներգետիկ արժեքով հաշվարկված, կարևորագույն սննդամթերքների ինքնաբավության մակարդակը կարող է կազմել գրեթե երեք քառորդը, իսկ սննդամթերքի առանձին տեսակների գծով Արցախը կարող է լրիվ ինքնաբավ լինել:

Ներկայումս Գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են հացահատիկային (զբաղեցնում է ցանքատարածությունների մեծ մասը), կերային բույսերի մշակությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը: Գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է նաև թթենու մշակությունը (2 հզ. հա, հիմնականում՝ Ասկերանի, Հադրութի ու Մարտունիի շրջաններում), որի հիմքի վրա զարգացել են շերամապահությունը, օղու և դոշաբի արտադրությունը, խաղողագործությունը (1980-ական թթ. 11 հզ. հա. տարեկան արտադրանքը՝ ավելի քան 170 հզ. տ) և պտղաբուծությունը (խնձոր, տանձ, դեղձ, նուռ, թուզ, սերկևիլ): Խաղողագործությունն առավել զարգացած է Մարտունիի և Մարտակերտի շրջաններում: Կարևոր ճյուղ է բանջարաբոստանային (սոխ, վարունգ, կաղամբ, սեխ, ձմերուկ և այլն) բույսերի մշակությունը: Ոռոգման ցանցի աղքատիկ վիճակը խոչընդոտում է երկրագործության զարգացումը: Տեխնիկական մշակաբույսերից գլխավորը ծխախոտն է (նախկինում եղել է բամբակը): Սարսանգի ջրամբարի ջրերով ոռոգվում են ԼՂՀ տարածքի միայն Մարտակերտի շրջանի դաշտային ցածրադիր մասերի հողատարածությունների 1/3 մասը: Գյուղատնտեսության առաջատար ճյուղերից են նաև խոշոր ու մանր եղջերավոր անասնապահությունը, խոզաբուծությունն ու թռչնաբուծությունը, համախառն արտադրանքի ծավալով զիջում է բուսաբուծությունը: 1988-ին կային մոտ 300 հզ. մանր, 100 հզ. խոշոր եղջերավոր անասուն, մոտ 95 հզ. խոզ, տարեկան արտադրվել է 66000 տ կաթնամթերք, 900-920 տ կենդանական յուղ, 1000 տ պանիր, 11 հզ. տ միս: 1989-1995-ին զգալի չափով կրճատվել է անասունների գլխաքանակը: Գյուղատնտեսության ապրանքների տարեկան միջին արտադրությունը 1988-1991 ին նվազել է 31,3 %-ով, մշակվող հողային մակերեսը՝ 60,3 հզ. հա-ով: Հետպատերազմյան ժամանակաշրջանում չեն օգտագործվում

[1] *Արցախի Հանրապետության Ազգային Վիճակագրական Ծառայություն, Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-դեկտեմբերին:*

գյուղատնտեսական նշանակության ավելի քան 40 հզ. հա. հողահանդակներ: Գյուղատնտեսական բնագավառի զարգացման պետական քաղաքականությունն ուղղված է հանրապետության պարենային անվտանգության ապահովմանը, ֆերմերային տնտեսությունների ստեղծմանը, տեղական արտադրողի շահերի պաշտպանությանը, գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացմանը[1]:

Գյուղատնտեսությունում շուկայական հարաբերություններին անցման ժամանակահատվածում, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, կտրուկ կրճատվեց տեխնիկական մշակաբույսերի մշակությունը, դրա հետ միաժամանակ գյուղատնտեսական շրջանառությունից դուրս մնացին վարելահողերի մի կարևոր մասը, որը բացատրվում է ոչ միայն արտաքին անբարենպաստ հանգամանքներով (պատերազմ, շրջափակում, տեխնիկայի և վառելանյութի գների աննախադեպ թանկացում), այլև հողային անարդյունավետ քաղաքականությամբ: Սակավահող երկրում այդ հողերի մեծ մասը գտնվում է սահմանամերձ գոտում և մշտական վտանգի տակ է:

Աղյուսակ 1. Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի բերքահավաքի ցանքային տարածություններն ըստ ԱՀ շրջանների, 2018թ. հունվար-դեկտեմբեր հեկտար

	Հացահատիկ և հատիկաընդեղեն		Կարտոֆիլ		Բանջարեղեն		Բոստանային մշակաբույսեր	
	2018թ .	2018թ. 2017թ. նկատ-մամբ, %	2018թ .	2018թ. 2017թ. նկատ-մամբ, %	2018թ .	2018թ. 2017թ. նկատմ. %	2018թ .	2018թ. 2017թ. նկատ-մամբ, %
ք. Ստեփա-նակերտ	-	-	-	-	-	-	-	-
Ասկերան	13	101.8	162.9	97.3	281.0	113.0	35.5	94.0
Հադրութ	18	179.2	101.0	96.2	131.8	103.0	21.0	175.0
Մարտակերտ	8	142.2	138.8	86.1	76.7	98.6	14.3	76.1
Մարտունի	16	116.5	132.9	120.5	250.6	120.9	13.5	95.7
Շահումյան	164.8	119.8	23.0	87.5	19.4	77.6	0.1	-
Շուշի	254.3	139.6	24.1	98.0	13.8	103.9	0.4	133.3
Քաշաթաղ	23	114.1	41.0	80.9	317.2	106.8	271.0	98.0
Ընդամենը	80 207.5	125.3	623.7	96.6	1 090.5	109.4	355.8	99.0

1 Լեռնային Ղարաբաղ: Գյուղատնտեսությունը
http://www.historyofarmenia.am/am/Encyclopedia_of_armenian_history_LXH_Gyuxatntesutyun

Աղյուսակ 2. Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքը 2018թ. հունվար-դեկտեմբերին, *ցենտներ*

	Հացահատիկ և հատիկաընդեղեն		Կարտոֆիլ		Բանջարեղեն	
	2018թ	2018թ. 2017թ. նկատմամբ, %	2018թ	2018թ. 2017թ. նկատմամբ, %	2018թ	2018թ. 2017թ. նկատմամբ, %
ք.Ստեփանակերտ	-	-	-	-	-	-
Ասկերան	254 584.8	81.0	12 367.0	113.3	54 327.1	163.9
Հադրութ	322 078.0	134.9	10 363.0	114.6	10 150.0	114.0
Մարտակերտ	114 627.6	77.9	6 238.4	73.5	4 769.4	100.0
Մարտունի	340 843.2	116.3	9 294.2	87.6	7 972.5	117.2
Ծաղկունյան	3 302.2	121.4	1 100.0	18.2	1 180.0	30.0
Շուշի	4 314.2	161.1	1 655.0	90.4	2 574.1	107.0
Քաշաթաղ	348 379.9	61.8	3 999.0	58.8	32 796.4	39.2
Ընդամենը	1 388129.9	88.8	45 016.6	83.8	113 769.6	79.2
	Բոստանային մշակաբույսեր		Պտուղ և հատապտուղ		Խաղող	
	2018թ	2018թ. 2017թ. նկատմ, %	2018թ	2018թ. 2017թ. նկատմ, %	2018թ	2018թ. 2017թ. նկատմ, %
ք.Ստեփանակերտ	-	-	-	-	-	-
Ասկերան	10 028.0	72.6	22 020.7	144.4	8 731.2	161.0
Հադրութ	1 170.0	84.8	10 379.0	55.0	4 750.0	71.4
Մարտակերտ	502.0	136.0	14 817.9	107.6	6 218.3	114.0
Մարտունի	494.2	92.7	8 821.5	99.7	51 871.4	102.2
Ծաղկունյան	23.3	-	157.0	5.9	247.5	103.1
Շուշի	93.0	166.1	282.0	35.2	105.0	105.0
Քաշաթաղ	153 385.0	173.9	14 253.1	82.0	2 389.0	69.1
Ընդամենը	165 695.5	158.8	70 731.2	91.2	74 312.4	103.1

Մշակելի հողատարածքների ընդհանուր հաշվեկշռի մեջ ավելացել է էքստենսիվ (հացահատիկային) ճյուղերի տեսակարար կշիռը և կրճատվել բարձրարժեք մշակաբույսերինը (բազմամյա և տեխնիկական մշակաբույսեր): Այս տեղաշարժը թելադրված է օբյեկտիվ պատճառով. տնտեսական ճգնաժամը և բնակչության աղքատացումը առաջնային դարձրին պարենի, հանապազօրյա

հացի խնդիրը, այստեղից էլ՝ հացահատիկի կարտոֆիլի և բանջարեղենի ցանքատարածությունների ընդարձակումը:
Հողի համատարած սեփականաշնորհումը իր դրական արդյունքների հետ միասին բացասական շրջադարձեր բերեց արցախցու համար: Երկրում գյուղատնտեսական նշանակության հողերը մասնատված են:
Ստեղծված պայմաններում գյուղացիական տնտեսություններին (ընտանեկան տնտեսություններին) բաժին է ընկնում ոլորտի համախառն արդյունքի գերակշիռ մասը: Վերջինս վկայում է տնտեսավարման այլ ձևերով, մասնավորապես՝ կոոպերացման սկզբունքով գործող տնտեսավարողների գործունեության սահմանափակության մասին:
Հողի շուկայի ձևավորման գործընթացը դանդաղեցնում է գյուղատնտեսության զարգացումը ողջ երկրի տարածքում: Մյուս կողմից՝ նկատվում է սեփականաշնորհված, հատկապես բերրի, բայց չօգտագործվող հողատարածքների որոշակի պարապուրդ, հետևաբար ժամանակի ընթացքում հանգեցնելով դրա որակի անկման և առկա ռեսուրսների ոչ նպատակային օգտագործման:
Սեփականաշնորհման հետևանքով առաջացած հողի մասնատվածությունը հարկադրում է այն մշակել հիմնականում ձեռքով և, չնայած վերջին տարիներին հակակարկտային կայանների տեղակայմանը մի շարք համայնքներում, թույլ է պաշտպանվածությունը տարերային աղետներից: Առավել զգալի է համատարած սեփականաշնորհումից հետո հողի տնտեսական գնահատման արդյունավետ սկզբունքների ու մեթոդաբանության բացակայությունը: Այս առումով Հայաստանի փորձը վկայում է, արհեստական ոռոգման բացակայության պայմաններում անջրդի պայմաններում հնարավոր է ստանալ բուսաբուծական գյուղմթերքների 1/5 մասը:
Ներկայումս (2018 թվականի տվյալներով) գյուղատնտեսությունում ձևավորվել է ՀՆԱ-ի 10.9%-ը: Համեմատության համար նշենք, որ երկու տարի առաջ այդ ցուցանիշը կազմել է 13.2% Մեր համոզմամբ ՀՆԱ-ում գյուղատնտեսության տեսակարար կշիռը նվազել է ի հաշիվ հանքարդյունաբերության տեսակարար կշռի ավելի քան եռապատիկ ավելացման՝ 2016թ. 5.5%-ից 2018թ. հասնելով 16.7%-ի: 2018 թվականի տվյալներով, գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 74092.8 մլն դրամ, նախորդ տարվա համեմատ կրճատվելով 3.1%-ով, ընդ որում բուսաբուծության ճյուղի մասնաբաժինը՝ 49.20% է, իսկ անասնապահությանը՝ 50.79%:
Աղյուսակ 3. Գյուղատնտեսության և հանքարդյունաբերության տեսակարար կշիռը ԱՀ ՀՆԱ-ում 2016-2018թթ.

	2016	2017	2018
Գյուղատնտեսություն	13.2	12.3	10.9
Հանքարդյունաբերություն	5.5	14.2	16.7

Աղյուսակ 4. Գյուղատնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքը

	2018թ. հունվար-դեկտեմբեր, ընթացիկ գներով, մլն. դրամ	Ընդամենի նկատմամբ, %	Աճի տեմպերը համադրելի գներով %
Գյուղատնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքը	74 097.4	100.0	96.1
այդ թվում՝			
Գյուղատնտեսություն	74 092.8	99.99	96.1
այդ թվում՝			
Բուսաբուծություն	36 458.7	49.20	92.1
Անասնաբուծություն	37 634.1	50.79	98.7
Ձկնորսություն	4.6	0.01	36.3

2018 թվականի հողային հաշվեկշռի տվյալներով վարելահողերի տարածքը կազմել է 84.2 հազ. հա, իսկ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները՝ 8.7 հազ. հա, այսինքն մնացած վարելահողերի մեծ մասը նպատակային չեն օգտագործվում: Էական ազդեցություն ունի մեքենայական աշխատանքների դժվարամատչելիությունը, հողակտորների կտրտվածությունը, ոռոգման ջրի բարձր սակագինը, գյուղատնտեսական արտադրանքի իրացման դժվարությունները: Սահմանամերձ համայնքներում հողի մշակությունը վտանգված է:

Աղյուսակ 5. ԱՀ հողային հաշվեկշիռը

	հեկտար	Բնակչության մեկ շնչի հաշվով
Վարելահող	84.2	0.571
բազմամյա տնկարկներ	8.7	0.059
Խոտհարքներ	22.5	0.153
Արոտավայրեր	294.2	1.994
այլ հողեր	97.5	0.661
Ընդամենը	507.1	3.438

Սերմնաբուծության համակարգի անկատարության, պարարտանյութերի ու թունաքիմիկատների անբավարար և ոչ ճիշտ օգտագործման, մշակության ագրոտեխնիկական կանոնների խախտման հետևանքով դեռևս ցածր է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը: Ցանքատարածությունների ավելացման և որոշ չափով ինտենսիվացման մակարդակի բարձրացման հաշվին մեծացել է հացահատիկի, բանջարեղենի և կարտոֆիլի

համախառն բերքը: Ինտենսիվացման առումով որոշակի դրական տեղաշարժեր կան այգեգործությունում:
Խաղողագործության ճյուղի զարգացմանը դեռևս խոչընդոտում են՝ խաղողի ներկայիս սորտային կազմի ոչ ամբողջական համապատասխանությունը վերամշակող արդյունաբերության և շուկայի պահանջներին, մշակության ագրոտեխնիկայի ոչ լիարժեք կատարումը և այգիների բարձր նոսրությունը:
Ներկայումս գյուղատնտեսական տեխնիկայի զգալի մասի շահագործման ժամկետը լրացել է, որի պատճառով ցածր է սարքինության մակարդակը և արտադրողականությունը, բարձր են շահագործման ծախսերը: Գյուղտեխնիկայի սարքինության մակարդակը ներկայացված է աղյուսակում:

Աղյուսակ 6. Գյուղատնտեսական տեխնիկայի առկայությունը և սարքինության մակարդակը, 2017-2018թթ, միավոր

	2017թ. հունվար-դեկտեմբեր			2018թ. հունվար-դեկտեմբեր		
	առկա	որից՝ սարքին	սարքինության մակարդակ, %	առկա	որից՝ սարքին	սարքինության մակարդակ, %
Տրակտորներ	1 265	1 037	82.0	1 285	1 100	85.6
Բեռնատար մեքենաներ	1 379	1 149	83.3	1 424	1 186	83.3
Հացահատիքահավաք կոմբայններ	258	207	80.2	277	216	78.0
Կարտոֆիլահավաք	1	1	100.0	2	2	100.0
Տրակտորային կցասայլեր	358	327	91.3	373	335	89.8
Տրակտորային խոտհնձիչներ	132	121	91.7	154	139	90.3
Կերահավաք կոմբայններ	11	11	100.0	5	5	100.0
Հատիկազտիչ մեքենաներ	98	89	90.8	104	98	94.2
Տրակտորային շարքացաններ	329	306	93.0	339	323	95.3
Տրակտորային գութաններ	754	720	95.5	819	795	97.1
Կուլտիվատորներ	340	331	97.4	364	358	98.4
Մալմիչներ	103	94	91.3	108	96	88.9

Լրջորեն տուժել է նաև անասնապահությունը: Բնակչության վճարունակ պահանջարկի, սեփական կերարտադրության կրճատման և ներկրվող կերերի ծավալների կտրուկ սահմանմափակման հետևանքով կրճատվել է անասնագլխաքանակը և անասնապահական մթերքների արտադրությունը: 1990թ. համեմատությամբ մի քանի անգամ կրճատվել է կերային մշակաբույսերի տարածությունը, անբավարար է օգտագործվում բնական կերահանդակները:

Աղյուսակ 7. Անասնագլխաքանակն ըստ ԱՀ շրջանների, 2018թ.

	Խոշոր եղջերավոր անասուններ		այդ թվում՝ կովեր		խոզեր	
	2018թ	2018թ. 2017թ. նկատմամբ, %	2018թ	2018թ. 2017թ. նկատմամբ, %	2018թ	2018թ. 2017թ. նկատմամբ, %
Ընդամենը	43 141	99.5	18 226	98.4	28 537	141.4
ք. Ստեփանակերտ	590	98.0	100	89.3	650	158.2
Ասկերան	7 766	98.1	3 601	102.3	6 274	143.1
Հադրութ	7 472	101.0	2 990	97.4	5 035	146.5
Մարտակերտ	6 412	97.0	2 898	95.6	2 779	123.2
Մարտունի	7 071	96.6	3 023	95.6	7 006	138.8
Շահումյան	2 821	97.3	1 117	95.6	863	169.5
Շուշի	839	102.7	362	98.9	440	2.0 անգ.
Քաշաթաղ	10 170	104.0	4 135	100.9	5 490	139.9

	ոչխարներ և այծեր		թռչուններ	
	2018թ	2018թ. 2017թ. նկատմամբ, %	2018թ	2018թ. 2017թ. նկատմամբ, %
Ընդամենը	68 980	119.2	409 568	107.7
ք. Ստեփանակերտ	97	2.4 անգ.	22 000	122.2
Ասկերան	10 449	88.3	91 981	91.0
Հադրութ	19 280	3.3 անգ.	44 360	122.8
Մարտակերտ	9 090	94.9	57 039	101.0
Մարտունի	8 405	96.9	151 222	117.0
Շահումյան	1 617	111.5	9 645	184.1
Շուշի	492	93.9	6 424	145.6
Քաշաթաղ	19 550	98.0	26 897	91.0

Անասնապահության ճյուղում անասնապահական որոշ մթերքների՝ կաթի և ձվի արտադրության ծավալների ավելացման հետ մեկտեղ դեռևս խնդիրներ կան տոհմային գործի կազմակերպման, մասնավոր անասնաբուժական համակարգի ամրապնդման և ոլորտի պետական աջակցության մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ: Դրա հետ միաժամանակ իր կարգավորումն է պահանջում սննդամթերքի անվտանգության և ստանդարտացման բնագավառները:

Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով), տոննա		Արտադրվել է կաթ, տոննա		Արտադրվել է ձու, հազ. հատ		Խուզվել է բուրդ, տոննա	
	2018թ	2018թ. 2017թ. նկատ-մամբ, %	2018թ	2018թ. 2017թ. նկատ-մամբ,%	2018թ	2018թ. 2017թ. նկատ-մամբ,%	2018թ	2018թ. 2017թ. նկատ-մամբ,%
Ընդամենը	14 618.9	94.8	42 843.5	98.6	48 058.4	120.0	177.6	67.5
ք. Ստեփա-նակերտ	195.3	132.1	243.2	79.4	2 492.2	92.9	0.2	25.4
Ասկերան	2 793.3	86.0	9234.9	101.9	15 850.8	114.5	34.3	62.8
Հադրութ	2 068.5	99.7	5622.7	102.2	4 952.2	122.9	17.1	47.9
Մարտակերտ	1 888.6	96.0	7156.2	100.9	7 394.2	116.4	29.8	87.3
Մարտունի	3 962.9	108.0	7478.5	94.9	12 433.4	123.9	26.7	79.7
Շահումյան	542.2	84.6	2595.1	92.1	1 021.1	2.1 անգ.	3.9	63.0
Շուշի	194.8	96.9	852.3	103.8	653.0	164.6	1.9	129.5
Քաշաթաղ	2 973.3	85.4	9660.6	96.8	3 261.5	147.4	63.7	65.9

Երկրում ինքնաբավության բարձր մակարդակ է ապահովվում՝ կարտոֆիլի, բանջարաբոստանային մշակաբույսերի, պտղի և հատապտղի, խաղողի, մանր եղջերավորների մսի ուղղությամբ, միջինից բարձր ինքնաբավության մակարդակ գոյություն ունի կաթի-կաթնամթերքի և խոշոր եղջերավորների մսի համար, ինչ վերաբերում է ցորենին, եգիպտացորենին, հատիկաընդեղեն մշակաբույսերին, թռչնի և խոզի մսին, ապա ինքնաբավության մակարդակը շարունակում է մնալ ցածր:

Երկրի գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների պատճառների մի մասը պայմանավորված են նաև արտաքին գործոններով: Մասնավորապես, մինչ զարգացած երկրներից ոմանք հորդորում են անցումային տնտեսություն ունեցող երկրներին անցնել ազատ առևտրի և բաց մրցակցության, հրաժարվել պետական միջամտության տարբեր ձևերից, իրենք իսկ խախտում են արդար մրցակցության սկզբունքները՝ կիրառելով լայնածավալ սուբսիդավորում, արտահանման պետական ֆինանսավորում, դեմպինգային քաղաքականության՝ ոլորտից դուրս մղելով տեղական ապրանք արտադրողները:

Ոլորտի զարգացման հեռանկարները

Արցախի գյուղերի և գյուղատնտեսության հեռանկարային զարգացման տեսլականներն են.

1) ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառմամբ առևտրային գյուղատնտեսական կազմակերպությունների, կոոպերատիվների և շուկայական ենթակառուցվածքների հետ ինտեգրված ընտանեկան գյուղացիական տնտեսությունների զարգացում,

2) պարենային անվտանգության շահերի և ագրոպարենային արտադրանքների արտաքին առևտրի հարաբերական առավելության սկզբունքների իրատեսական համադրումով՝ բնակչության կայուն պարենային ապահովում և

ագրովերամշակող հատվածի գյուղատնտեսական հումքի պահանջարկի բավարարում,
3) գյուղատնտեսությունում համախառն արտադրանքի ավելացում՝ աշխատանքի արտադրողականության աճի հաշվին, գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակի կրճատում և ավելցուկային աշխատուժի մի մասի օգտագործում գյուղատնտեսության սպասարկման և վերապատրաստման միջոցով ոչ գյուղատնտեսական գործունեության բնագավառներում,
4) արտադրված գյուղատնտեսական հումքի զգալի մասի վերամշակում փոքր ու միջին ձեռնարկատիրության կազմակերպած արտադրամասերում,
5) բուսաբուծության և անասնապահության ներճյուղային կառուցվածքում բարձր ավելացված արժեք ապահովող գյուղմթերքների արտադրության գերակշռություն,
6) հանրապետության բնակչության պարենային անվտանգության բարձր մակարդակ, կարևորագույն պարենամթերքների ինքնաբավության ապահովում, գյուղական աղքատության և արտագաղթի կրճատում:
187. Ժամանակակից գյուղատնտեսության զարգացման մայրուղին արդյունաբերականացումն է, այսինքն՝ ինտենսիվացման մակարդակի բարձրացումը, արդիական տեխնոլոգիաների և կառավարման համակարգերի կիրառումը: Տվյալ խնդրի լուծմանը կարող են նպաստել՝
- գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության խթանումը, արհեստների, գյուղմթերքների վերամշակման, գյուղատնտեսության սպասարկման կարողությունների ստեղծմանն աջակցությունը, ագրոտուրիզմը,
- խնդրի լուծմանը կարող են նպաստել նաև գյուղացիական տնտեսությունների ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակի բարձրացումը, մասնավորապես վարելահողերի լիարժեք օգտագործումը, արտադրության ինտենսիվացման միջոցով՝ մշակաբույսերի բերքատվության և կենդանիների մթերատվության բարձրացումը:
Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման գործում կարևոր է առավել անբարենպաստ գոտիներում հողի մշակությանն ուղղված նպատակային սուբսիդավորման ծրագրերի իրականացման վերականգնումը, ոլորտում օգտագործվող կարևորագույն ռեսուրսների գների սուբսիդավորման ծրագրի շարունակումը, դրանց կիրառման մեխանիզմների կատարելագործումը: Միաժամանակ, հողօգտագործմանը կնպաստի արտադրատեխնիկական սպասարկումների բարելավումը լիզինգային ծրագրերի, գյուղտեխնիկայի ձեռքբերման սուբսիդավորում շնորհիվ: Հողօգտագործման արդյունավետության բարձրացման խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է իրականացնել մասնատված հողակտորների համատեղ օգտագործման ծրագրեր, վերջինիս ուղղությամբ կիրառելով խթանման տարբեր լծակներ (վարկեր, դրամաշնորհներ, պետական ծրագրեր և այլն): Կարևորվում են նաև գյուղմթերքների կանոնակարգված գործող մեծածախ շուկաների ձևավորումը, հավաքման կետերի, տեղեկատվական կենտրոնների գործունեությունը:
Ստեղծված իրավիճակում ագրարային ոլորտում կիրառվող քաղաքականության մեջ կարևորվում է կոոպերացիայի խթանման քաղաքականությունը: Առավել նպատակահարմար են կոոպերացիայի զարգացման հիմնական չորս ուղղություններ.
- առաջինը՝ օրենսդրության կատարելագործումը և համալրումն է.

- կոոպերացիայի ձևավորման տնտեսական խթանման մեխանիզմների կիրառումը.
- հաջորդը՝ կոոպերացիայի սկզբունքների, առավելությունների վերաբերյալ գյուղատնտեսությունում տնտեսավարողների իրազեկվածության մակարդակի բարձրացումն է.
- կոոպերացիայի զարգացման ուղղություններից է նաև գյուղատնտեսությունում կոոպերացիայի ձևավորմանը խթանող ինստիտուցիոնալ կառույցների ձևավորումը:

Ագրարային ոլորտի առջև ծառացած կարևոր խնդիրներից է համարվում հաշվառման համակարգի բարելավումը: Խնդրի լուծմանը պետք է ուղղել՝

- գյուղատնտեսական համատարած հաշվառման ծրագրի իրականացումը, որի նպատակն է՝ գյուղատնտեսության կառուցվածքի, մասնավորապես գյուղատնտեսական նշանակության հողերի, անասնագլխաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի, գյուղատնտեական նշանակության շինությունների, ինչպես նաև ոլորտի առկա ներուժի՝ մարդկային, նյութական և դրա օգտագործման վերաբերյալ հավաստի տեղեկատվության ստացումը՝ մարզերի և համայնքների կտրվածքով,
- հաշվառման համակարգի բարելավման ուղղություններից է գյուղատնտեսական վարչական ռեգիստրի ամբողջական համակարգի ներդրումը,
- ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների հաշվառման և համարակալման համակարգի ներդրումը:

Գյուղատնտեսության կայունացման և զարգացման համար կարևորվում է ոռոգման ջրապահովվածության մակարդակի բարձրացումը, որը հնարավոր է համարվում հետևյալ ուղղություններով՝

- ջրամատակարարման մեխանիկական եղանակից ինքնահոսին անցում,
- ոռոգման համակարգերում նոր տեխնոլոգիաների ներդրում, դրանց արդյունքում ջրի խնայողական ռեժիմների կիրառում:

Գյուղատնտեսության առաջիկա խնդիրներից է համարվում նաև կարևորագույն գյուղատնտեսական մթերքների երաշխավորված գների կիրառման համակարգի ներդրումը: Այս ուղղությամբ հանրապետությունում անհրաժեշտ է իրականացնել՝

- կարևորագույն գյուղատնտեսական մթերքների երաշխավորված գների կիրառման համակարգի ներդրման մեխանիզմների մշակում,
- երաշխավորված գների կիրառման իրավա-օրենսդրական հիմքերի մշակում և ընդունում:

Գյուղմթերքների արժեշղթայի ձևավորման գործընթացին կնպաստի նաև իրացման համակարգի կատարելագործման, տեխնիկական ապահովման, նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարման, հետբերքահավաքային տեխնոլոգիաների, խորհրդատվության, տեղեկատվության, արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների խնդիրների լուծումը:

Երկրի պարենային անվտանգության նպատակով առաջիկա տասնամյակում անհրաժեշտ է պարենամթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացում շուրջ 20 տոկոսային կետով: Վերջինս պահանջում է հետևյալ միջոցառումների իրականացումը՝

- ցորենի, եգիպտացորենի, հատիկաընդեղենային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացման պետական ծրագրերի իրականացման միջոցով՝

սերմերի ապահովվածության մակարդակի բարձրացումը և մատչելի վարկավորմամբ ցանքատարածքների օգտագործման արդյունավետության բարձացում,

- կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավման ծրագրերի ծավալների ընդլայնում, մատչելի պայմաններով՝ կենդանիների արհեստական սերմնավորման գործընթացի կազմակերպում, բարձր մթերատու կենդանիների ներկրման և տեղում վերարտադրության ծրագրերի ծավալների ընդլայնում, անասնաբուժական համակարգի բարելավում:

Սննդամթերքի անվտանգության հիմնական ուղղությունները կլինեն՝

- օրենսդրությունը սննդի անվտանգության միջազգային դաշտին մոտարկումը,
- պետական օժանդակությամբ սննդամթերքի արտադրության պատշաճ հիգիենիկ և արտադրական գործելակարգերի, ինչպես նաև HAACCP համակարգի կամ ISO 22000 ստանդարտի ներդրումը,
- սննդամթերքի անվտանգության լաբորատորիաների կարողությունների հզորացումը և ISO 17025 ստանդարտով հավատարմագրումը,
- բնագավառում կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացի պատշաճ կազմակերպումը:

Առանձնահատուկ կարևորվում է նաև սելեկցիոն անվտանգությանը՝ հաշվի առնելով վերջին շրջանում տրանսգենետիկ ձևախեղումներն ու կասկածելի ծագում ունեցող ներմուծված սննդամթերքը, ինչպես նաև արտերկրից ներկրված կոմերցիոն սորտերը, որոնք քանակ և ամրություն ապահովելով, լուրջ սպառնալիքի են վերածվել մարդկանց առողջության համար: Առանձնակի կարևորվում է հացահատիկային և կերային մշակաբույսերի սերմնաբուծության համակարգի զարգացումը, առաջնային սերմնաբուծության բնագավառում պետական աջակցությունը,

Կարևոր չափանիշներից մեկը, որով կարելի է գնահատել բարեփոխումների արդյունավետությունը, դա գյուղացու տնտեսական և սոցիալական վիճակի բարելավումն է: Գյուղատնտեսությունում զբաղվածության կրճատում չի ակնկալվում, այլ ենթադրվում է, որ տնտեսական աճը գյուղատնտեսության ոլորտում կիրականացվի բացառապես արտադրողականության աճի հաշվին:

Գյուղատնտեսության ոլորտի ռիսկերի մեղմման գործընթացում կարևորվում է ապահովագրական համակարգի ներդրումը, որը պահանջում է գյուղում ապահովագրական ռիսկերի գնահատման ծրագրի իրականացումը:

Արցախի գյուղերի զարգացման նպատակով պետք է խնդիր դնել ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի և բնակիչների ոչ գյուղատնտեսական եկամուտների տեսակարար կշիռների ավելացումը, մասնավորապես, գյուղմթերքների վերամշակման ոլորտում՝ համապատասխան արտոնությունների արդյունավետ համակարգի ներդրման միջոցով:

Կարևորվում է գյուղում փոքր արտադրությունների, ինպես նաև ժողովրդական արհեստների զարգացմանն աջակցությունը:

Պետությունը պետք է աջակցի տեղական արտադրության գյուղմթերքների և դրանց վերամշակումից ստացված ապրանքների համար Հայաստանի միջոցով արտերկրի, առաջին հերթին՝ ԵԱՏՄ պետությունների շուկաների բազմակողմանի ուսումնասիրությունների իրականացմանը և տեղական ապրանքների ցուցահանդեսների կազմակերպմանն ու դրանց գովազդին՝ արտերկրում:

Առաջնահերթ խնդիրներից է բուսաբուծության, անասնապահության ճյուղերում, գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերությունում արդիա-

կան տեխնոլոգիաների ներդրումը, որոնց իրականացումը հնարվոր է համարվում հետևյալ գործիքների կիրառմամբ՝

- նպատակային մատչելի վարկերի տրամադրում,
- մրցակցային դրամաշնորհային ծրագրերի իրականացում,
- վարկային ծրագրերում արդիական տեխնոլոգիաների խթանման բաղադրիչների նախատեսում,
- ագրարային ոլորտի առանձնահատկություններին համապատասխան լիզինգային մեխանիզմների կիրառմամբ տեխնիկական վերազինում,
- վենչուրային հիմնադրամների միջոցների օգտագործում և այլն:

Արտաքին կապերի համադրման առումով կարևոր է բացառել ներկայումս նկատվող կրկնողություններն ինչպես միջազգային կառույցների, այնպես էլ Սփյուռքի տարբեր բարեգործական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերում: Արդյունքում՝ դժվարությամբ ձեռք բերվող միջոցներ չեն վատնվի միևնույն նպատակների համար՝ երբեմն ոչ բավարար արդյունավետությամբ: Ինչպես գյուղատնտեսության ներկա կարողության առաջարկվող գույքագրումը, ագրարային հատվածի կարիքները ևս հաշվառման կարիք ունեն:

Արտոնյալ վարկերի տրամադրմամբ և պետական մթերումների (պետական պատվերի) նվազագույն քանակով գյուղմթերքների արտադրության խթանմամբ անհրաժեշտ է նպաստել գյուղմթերքների մրցունակության բարձրացմանը:

Աչցախում գյուղատնտեսության զարգացումը և գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության բարձրացումը պայմանավորված են հետևյալ հիմնական խնդիրների արդյունավետ լուծման հետ.

- ամայացած գյուղերի աստիճանական վերաբնակեցումը և Արցախի Հանրապետության տարածքային զարգացման անհամաչափության կրճատումը,
- գյուղացիական տնտեսությունների զարգացման համար գրավիչ պայմանների ձևավորման արդյունքում գեր-ուրբանիզացիայի կասեցումը,
- հարկային համահարթեցված վարչարարության վերանայումը և անցումը՝ հարկային շրջանայնացման՝ նախատեսելով հարկային գրավիչ արտոնությունների համակարգ հեռավոր բնակավայրերի համար:

Ոլորտի արդյունավետության բարձրացմանը կնպաստեն նաև հետևյալ քայլերը՝

- Նպատակային և հետևողական ներդրումներ ճանապարհային շինարարության մեջ (հատկապես սահմանամերձ գյուղերը մարզկենտրոնների հետ կապելու համար):
- Բնական գազի և վառելիքի այլ տեսակների տեղական պահեստարանների ստեղծում:
- Համեմատաբար էժան գներով էլեկտրաէներգիայի կանոնավոր մատակարարման խնդրի հանգուցալուծում՝ արևի, հողմի, երկրի ընդերքի, ջրի էներգիան արդյունավետ օգտագործելով լեռնային և սահմանամերձ գյուղերում:
- Լեռնային տեղանքին համապատասխան հատուկ գյուղատնտեսական մեքենաների ձեռքբերում և դրանց սպասարկման և հավաքման արտադրության կազմակերպում՝ Արցախում:
- Գյուղատնտեսական մթերքները վերամշակող և էկոլոգիապես մաքուր արդյունաբերական փոքր ձեռնարկությունների հիմնում (մասնավորապես, գյուղմթերքները վերամշակող կամ դրանից ստացվող սննդամթերքի փաթեթավորման, սառեցման և պահեստավորման):

• Փոքր արտադրությունների, մասնավորապես Արցախի գորգագործության, կարպետագործության, ասեղնագործության, բրուտագործության, փայտամշակման, խեցեգործության արհեստանոցների հիմնման խթանում:
• Կենցաղային սպասարկման տեղական փոքր կենտրոնների վերականգնում:
Գյուղմթերքների վերամշակման և դրանց արտահանման խթանման նպատակով՝
- վարկի գրավադրման ժամանակ հաշվի առնել պետության կողմից ԱԱՀ-ի վերադարձման պարտավորությունները,
- նախատեսել գյուղմթերքներ արտահանող ձեռնարկությունների բաժնեմասի ձեռքբերում պետության կողմից,
- ձևավորել Արցախյան ապրանքանիշ և կիրառել պետության կողմից մրցունակ ապրանքների պատվերներ,
- գյուղմթերքների վերամշակմամբ մասնագիտացած, մասնավորեցված և չգործող ձեռնարկությունների նկատմամբ կիրառել պրոգրեսիվ գույքահարկ, իսկ որոշ դեպքերում նախատեսել նաև դրանց մրցութային վերամասնավորեցում,
- արտերկրի ցուցահանդեսներում Հայաստանի աջակցությամբ կատարել Արցախում արտադրված ապրանքների առավել գրավիչ տաղավարի ընտրություն և համաֆինանսավորում,
- տրամադրել երկարաժամկետ վարկեր՝ պետական երաշխիքներով,
- աջակցել վերամշակվող արտադրությունների արտադրանքի իրացմանն արտերկրում:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Շ.Շ.Ասրյանը: